

Ⓔ ԲԱՆԺՍԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ Ⓔ

034F-0349

2450 F

2

Ս. ՂԱԶԱՐ

1923

ՓԵՏՐՈՒԱՐ

Figure 2

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ՀՆԱԳԻՐ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

Առաջինը՝ Մայրավանքիս մէկ ջեռագրէն հա-
նուած է:

Երկրորդը ազնուօրէն զրկուած է Հալէպի Հայոց Արքանապատիւ Առաջնորդական Փոխանորդին կողմանէ՝ հրատարակելու համար «ՅԱԶ-ՄԱԿԷՊ»ի Էջերուն մէջ, ինչ որ հանձնօրով կը կատարուէր:

Արեւկայ է՝ ըստ տեղեկագրին՝ Հախպու Ս. Գաւառ. Մանկ. Եկեղեցւոյ Չեւաքրաց Մատենադարանի մէջ գտնուող թիւ 56 քրքեայ բոլորագիր Ռ. Ի. Բ. րուսագրութեամբ 27 X 20 չափանկարեղի կաշկապտ Չեւաքի ՍԱՂ. ՄԱՍԻՍԻ ԲԷԼԱՍ ԿԱՐԱՐԱՆԻ ԻՄՈՒՆ.

Ձեռագրատան Ա. Յայսմաուրցը՝ Հայոց ՌՃԻԵ Թուականին զբաղած ունի հետեւեալ պատմական էջը՝ Մարերի ամսոյն 13/ն:

« Ի յերկերիւր ~~մարտնոնն~~ ~~չարսն չէ~~ ~~ամենայն~~ և մօր նորա Հեղինայ տաճա-
նեաց Զափար ամիրայն պիտոյտալ որ արիւն չեղի արեգակն Սյս կոստանդու-
ս

միջոց, Էւս է քան զհարեւոն Դ աւուր
հեռի, և նոյն կերպիւ շինեցաւ ի վերայ
Դրեկղաթայ, որ է Շատոն գետ: Ի սոյն ամի
յայտնեցաւ կին մի ի Բուխարայ, որ ի
ծննդենէ բնաւ չէր առեալ կերակուր, ոչ
կաթն և ոչ այլ ինչ, և զարգացեալ էր
հասակաւ գէր և հրկաշիւ, և բերին զնա
ի Բաղտատն այդ ճաֆարի՝ զոր փորձեալ
եզիտ տայնէս: Այս ճաֆար այնքան ճշշ-
որի է նոր հարկի ի քրիստոնէից արծաթ և
ոսկի՝ մինչ զի զգերեզմանս բանային և
թէ զինդ կամ մատանի մնացեալ էր հետ
սիրական մեռելի՝ զայն առեալ տային ի
հարկն և ոչ վճարէին: Ուստն և յոյնք
բանալ զգերեզմանս: Որ և զօին զգերեզ-
ման Շինողի նիկոմիդեայ քաղաքին բա-
զում ոսկով, Բացին և մեծ տապան մի
մարմարիտնայ և զաին զրեալ ի նաւս: Ձինչ
օգուտ է ծածկելոցդ զիս, զի աւուրս կուս-
տանն զիս և մօր նորա Հելինեայ տեսա-
նէս: Եւ իսկ արեգակն: Այս կոստանդիու-

3

ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА

References

digitised by
e05013 1996-12-07

A.R.A.R. @

նոս ոչ թէ մեծն է ինքնակալն, այլ յետին ժամանակիս, որ տաճիկն տիրեալ էր աշխարհիս: Այս կոստանդին և Երիւնէ մայր սորին ի միասին թագաւորեցին ամս Ժ: Եւ ընկեցեալ զմայրն կոստանդին՝ ինքն միայն թագաւորեաց ամս Ե: Եւ ապա մօլըն կալեալ զորդին՝ եհան զաշխ և կուրացոյց զորդին և ինքն թագաւորեաց ամս Ե: Երիւնէ, որ է Հեղինէ: Վայ աշխարհիս գայթակղութեան»:

Հորիւյ. Ո. Կ.

«Փառք ամենասուրբ երրորդութեանն և մի աստուածութեանն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ՝ այժմ»:

«Արդ՝ գրեցաւ սուրբ երգս դաւթեան, որ կոչի սաղմոսարան»:

«Ի լաւ և յընտիր աւրինակէ որ կոչի զառնեցի, ի թվկնիս մերոյ Ռիկլ ի մայրաքաղաքս Հալապ, ընդ հովանեաւ սուրբ աստուածածնին և սուրբ քառասնիցն և այլ սրբոցն որ աստ կան հաւաքեալ: Արդ՝ եղև աւարտունն երգարանիս ի Հայրապետութեան կիլիկիոյ Տեառն Տէր Յովհաննէս կաթողիկոսին, և երաժիշտ քաջ ըրարունակեալսն, և ի քահանայապետութեանն մայրաքաղաքիս Հալապ՝ Տէր Խաչատուր քաջ երաժիշտ Վարդապետին: Աւարտեցաւ ձեռամբ անարհեստ և ախմար զրչի, սուտանուն Ղազար քահանայի, որ անուամբ միայն է և գործով ոչ, Յորժամ ընթեռնուեց որ ըստ օրէ զերգն Դաւթի, և ի յաւարտն յիշեցէր, և աստուած ողորմի ասացէր, ժամկոչ Տատուրին և իւր ծնողացն, հօրն Պողոսին, և մօրն Հերիքին, և ամենայն արեան մերձաւորացն՝ որ կամաւ և եռափափաք սիրով ետ զրիւ զսալիշատակ անջնջելի և եղ ի սուրբ քահանայութեան երկնամասն եկեղեցին, քանի որ սուրբ քառասունընէ շէն կամ ոչ ոք չունի իշխանութիւն ի դաւանէ սորին հանել, ոչ ազգական, և ոչ աստար, ոչ կարգաւոր, և ոչ աշխարհական, եթէ ոք անդըքնի,

կամ վաճառելով, կամ գրաւելով զսաղմոսարանս՝ ի ներքոյ պատժոյ եղիցի: Բայց լաւ պահողքն պահպանեալ եղիցին ի Քրիստոսէ: Արդ՝ երես անկեալ աղաչեմ զձեզ, ով դասք լոյսեւրամ քահանայից և սաղմոսերգողաց, որք հանդիպիք ամա կարդալով կամ աւրինակելով, կամ զաղափար տանելով, կամ տեսնելով, յիշեալիք ի վեր[ը]նթաց յաղօթս ձեր, զանարժան Ղազարս, և զուսուցիչն իմ զտէր Վասիլ վարպետն, և զՅակոբ քաջ քարտուղարն և որ բազում աշխատութեամբ աշխատեցան ի յուսուցանելն զանարժանս: Տէրն մեր Յիսուս Քրիստոս երկնաւոր Վարդապետն, իւրեանց աշխատանաց փոխարինին՝ միտոյն հազարապատիկ և բիրապատիկ հատուցէ ի հանդերձեալ դատաստանին, ամէն: Այլ և զմարմնաւոր ծնողքս իմ յիշեցէր ի Քրիստոս, զհայրն իմ զմահտէսի Պաղտատարն և զմայրն իմ զմահտէսի Լուսինն, և զամենայն արեան մերձաւորքն, ամէն: Այլ և զՄտեփաննոս աշակերտն իմ յիշեցէր որ բազում աշխատութիւն ունի ի զին սաղմոսարանիս, յիշեցիք աղաւթիւք, և որ աստուն է ի սուրբ բարեաց Քրիստոսն Աստուած, մեզ և ձեզ ողորմեացի յիւր միւսանգամ զալուստն, ամէն»:

ԳԱՐՈՒԶՈՑԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄՈՄԸ

Քիչ ատենէն Նիւ – Եորքէն պիտի մեկնի արտասովոր մոմ մը, որ կը կշռէ մէկ տակառաւի (100 լիտր): Կը նուիրեն Հնդկիկոս Գարուզոյի հիմնած Ապաստանարանի որբերը, որպէս զի կանգնուի Մատենա տի Բոմբէի եկեղեցւոյն մէջ ու վառի ամէն տարի 24 ժամ, և այն ալ՝ ճիշդ Համօրէն Նշնեցեաց օրը: Մոմը կ'արժէ 3750 տոլար: Անկա քիմիապէս այնպիսի կերպով մը բաղադրուած է՝ որ կարենայ 1800 տարի տեւել: Շինուած է յոյն գծագրութեան մը համեմատ հարկ քանդակներով՝ ըստ ռոյմ վերաբարձացման: